ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«07» «փետրվար» 2024 թ. № 42-Ն

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի №326-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու, դրա անհատական կազմը, աշխատակարգը, գույքագրման ենթակա բնության հուշարձանների ցանկը և գույքագրման ակտի ձևը հաստատելու մասին» №326-Լ հրամանի՝
   1) հավելված №2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի №1-ի,
   2) հավելված №4-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի №2-ի:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

2/7/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«07» փետրվար 2024թ.
ք. Երևան

Հավելված N 1
Շրջակա միջավայրի նախարարի
2024 թվականի մարտի 07-ի
N 124 հրամանի

Հավելված N 2
Շրջակա միջավայրի նախարարի
2022 թվականի սեպտեմբերի 22-ի
N 326-Լ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատված և դեռևս չանձնագրավորված 201 բնության հուշարձանի գույքագրումն իրականացնելու նպատակով ստեղծվող աշխատանքային խմբի գործունեությունը:

2. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ, ոլորտին առնչվող իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

3. Աշխատանքային խմբի գործունեության նպատակը Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատված և դեռևս չանձնագրավորված՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի մարզերում և Երևանում գտնվող 201 բնության հուշարձանի գույքագրման աշխատանքների իրականացումն է:

Արդյունքում նախատեսվում է ունենալ վերանայված և հաստատված բնության հուշարձանների ցանկ, որտեղ ներառված կլինեն այն բնության հուշարձանները, որոնք ժամանակի ընթացքում մարդածին և/կամ այլ գործոնների ազդեցության հետևանքով չեն

կորցրել իրենց հազվագյուտ, եզակի, բացառիկ կամ տիպիկ, գիտական, էկոլոգիական, գեղագիտական և պատմամշակութային արժեքը: Աշխատանքային խմբի կողմից ներկայացված միջանկյալ և ամփոփ հաշվետվությունները և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության համապատասխան որոշման նախագծով բնության հուշարձանների վերանայված ցանկը տեղեկատվական և իրավական հիմք կհանդիսանան բնության հուշարձանների անձնագրավորման աշխատանքների իրականացման համար:

III. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Աշխատանքային խումբը կազմված է 15 անդամներից:

5. Աշխատանքային խմբում գործում է հիմնական կազմ, որում ընդգրկվում են շրջակա միջավայրի նախարարության, կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարության, կադաստրի կոմիտեի, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, Գիտությունների ազգային ակադեմիայի ներկայացուցիչները, ինչպես նաև յուրաքանչյուր մարզպետարանից մեկական ներկայացուցիչ (այսուհետ՝ Հիմնական կազմ):

6. Աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպվում է նիստերի և դաշտային ուսումնասիրությունների միջոցով:

7. Աշխատանքային խմբի յուրաքանչյուր նիստ սկսվում է օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի քննարկմամբ:

8. Աշխատանքային խմբի նիստերի ընթացքում քննարկվում են հաջորդ նախատեսվող աշխատանքների կազմակերպչական հարցերը, դաշտային ուսումնասիրությունների պլան-ժամանակացույցը, քննարկվում են հաջորդ գործուղման վայրերը և/կամ ամփոփվում են արդեն իսկ իրականացված աշխատանքները:

9. Աշխատանքային խմբի կողմից գույքագրման նպատակով դաշտային ուսումնասիրությունների աշխարհագրությունը կազմվում է ըստ մարզերի, որտեղ գտնվում են բնության հուշարձանները՝ համաձայն հավելված N 3-ի:

10. Աշխատանքային խմբի դաշտային ուսումնասիրությունների պլան-ժամանակացույցը և համապատասխան գործուղման վայրերը նախանշվում և հաստատվում են Հիմնական կազմի կողմից՝ նախապես համաձայնեցվելով շրջակա միջավայրի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հետ:

11. Դաշտային ուսումնասիրությունների ընթացքում Հիմնական կազմի կողմից իրականցվում է բնության հուշարձանի տեղորոշում, ներկա վիճակի ուսումնասիրություն, և բնության հուշարձանների շուրջ ստեղծված իրավիճակի մասնագիտական վերլուծություն:

12. Աշխատանքային խմբում ընդգրկված՝ մարզպետարանների ներկայացուցիչները մասնակցում կամ աջակցում են միայն տվյալ մարզում գտնվող բնության հուշարձանների գույքագրման աշխատանքների իրականացման նպատակով կազմակերպվող դաշտային ուսումնասիրություններին, ինչպես նաև այդ ուսումնասիրությունների արդյունքում կազմված միջանկյալ հաշվետվությունների քննարկմանը:

13. Հիմնական կազմի կողմից իրականացված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում՝ տեղում յուրաքանչյուր բնության հուշարձանի համար կազմվում է բնության

հուշարձանի գույքագրման ակտ՝ համաձայն հավելված N 4-ի, որը ստորագրվում է վերոնշյալ խմբի անդամների կողմից:

14. Աշխատանքային խմբի կողմից կազմված բնության հուշարձանի գույքագրման ակտն իրավազոր է, եթե այն ստորագրվում է Հիմնական կազմի առնվազն երկու ներկայացուցչի կողմից:

15. Հիմնական կազմի կողմից կազմված գույքագրման ակտի հետ մեկտեղ կցվում է բնության հուշարձանի արտաքին տեսքը բնորոշող առնվազն 5 լուսանկար, անհրաժեշտության դեպքում՝ նաև համապատասխան տեսագրությունը (բնության հուշարձանի արտաքին տեսքը, առանձին դեպքերում նաև ներքին տեսքը, և վիճակը բնութագրող լուսանկարներ, օդալուսանկարներ, տեսանկարահանումներ և այլն):

16. Հիմնական կազմը յուրաքանչյուր մարզում գտնվող բնության հուշարձանների գույքագրման աշխատանքների ավարտից հետո կազմում է միջանկյալ հաշվետվություն, որը պարունակում է ամփոփ տեղեկատվություն Հիմնական կազմի՝ տեղանքներ այցելությունների, ուսումնասիրությունների և վերլուծությունների վերաբերյալ: Միջանկյալ հաշվետվությանը կցվում են նաև կազմված և հաստատված գույքագրման ակտերը, լուսանկարները, ինչպես նաև տեսանկարահանումները (առկայության դեպքում):

17. Աշխատանքային խմբի դաշտային ուսումնասիրությունների և նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված պետական պաշտոնյաներ, գիտական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ անձինք, որոնք դաշտային ուսումնասիրությունների արդյունքում՝ գույքագրման ակտում հաստատում են իրենց մասնակցությունը:

18. Աշխատանքային խմբի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հիմնական կազմի կեսից ավելին:

19. Աշխատանքային խմբի դաշտային ուսումնասիրությունն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հիմնական կազմի առնվազն երկու ներկայացուցիչ:

20. Հիմնական կազմը պարտավոր է.

1) նախապես կազմված ժամանակացույցին և սահմանված երթուղիներին համապատասխան իրականացնել դաշտային ուսումնասիրություններ,
2) ուսումնասիրությունների ընթացքում տեղորոշել, ուսումնասիրել, վերլուծել և կազմել բնության հուշարձանի ներկա վիճակի գույքագրման ակտ,
3) յուրաքանչյուր մարզում գույքագրման աշխատանքների ավարտից հետո գույքագրման արդյունքների վերաբերյալ միջանկյալ հաշվետվությունը ներկայացնել Նախարարին,
4) աշխատանքների ավարտից հետո՝ գույքագրման արդյունքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը ներկայացնել Նախարարին:

21. Աշխատանքային խմբի կողմից ներկայացված փաստաթղթերը կցվում են հաշվետվությանը և հանդիսանում դրա անբաժանելի մասը:

IV. ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՆԴԱՄԸ

22. Հիմնական կազմի անդամը՝

1) պատասխանատու է աշխատանքային խմբի աշխատանքների արդյունավետ իրականացման համար,
2) մասնակցում է աշխատանքային խմբի նիստերին և դաշտային

ուսումնասիրություններին, իսկ մասնակցության անհնարինության դեպքում՝ այդ մասին տեղեկացնում է Հիմնական կազմին,

3) աշխատանքային խմբի ընդունած որոշման հետ ունեցած անհամաձայնության դեպքում՝ ներկայացնում է գրավոր կարծիք, որը ներառվում է աշխատանքային խմբի նիստի արձանագրության մեջ և կցվում դրան,

4) իրավունք ունի պահանջելու տվյալներ, հաշվետվություններ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն,

5) ներկայացնում է աշխատանքային խումբը տարբեր գերատեսչություններում:

V. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

23. Աշխատանքայի խմբի քարտուղարը՝

1) նախապատրաստում է նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և ապահովում դրանց տրամադրումն աշխատանքային խմբի անդամներին,

2) արձանագրում է աշխատանքային խմբի նիստերի քննարկումները,

3) յուրաքանչյուր մարզում գտնվող բնության հուշարձանների գույքագրման աշխատանքների ավարտից հետո կազմում է միջանկյալ հաշվետվություն, որը հաստատվում է աշխատանքային խմբի հիմնական կազմի կողմից և ներկայացվում Նախարարին,

4) իրականացնում է աշխատանքային խմբի աշխատանքների հետ կապված գործավարությունը,

5) արձանագրությունում կցում է աշխատանքային խմբի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները:

VI. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

24. Աշխատանքային խմբի գործունեությունը դադարեցվում է սույն հրամանի Հավելված 3-ով սահմանված բոլոր բնության հուշարձանների գույքագրման աշխատանքների ավարտից և Նախարարին ամփոփ հաշվետվությունը ներկայացնելուց հետո:

Հավելված N 2
Շրջակա միջավայրի նախարարի
2024 թվականի փետրվարի 07-ի
N 02-Լ հրամանի

Հավելված N 4
Շրջակա միջավայրի նախարարի
2022 թվականի սեպտեմբերի 22-ի
N 326-Լ հրամանի

Գույքագրման սկիզբ՝
«___» «_____» 202__թ.
Գույքագրման ավարտ՝
«___» «_____» 202__թ.

ԱԿՏ № _____

ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐԺԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ

1.Բնության հուշարձանի անվանումը՝ _____
համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի № 967-Ն որոշման

2.Բնության հուշարձանի հերթական համարը՝ (Սույն հրամանի հավելված 2-ով սահմանված՝ օրինակ 1-ին կետի 1-ին ենթակետ կամ 1.1) _____

3.Բնության հուշարձանի տիպը՝ _____
երկրաբանական, ջրաերկաբանական,ջրագրական, կենսաբանական կամ բնապատմական

4.Բնության հուշարձանի գտնվելու վայրը՝ _____
մարզ, համայնք

5.Բնության հուշարձանի տեղադիրքի կոորդինատային տվյալներ՝ (առնվազն 1 կետով, WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով)
_____

6.Բնության հուշարձանի ներկա վիճակի վերլուծություն՝ _____
_____
_____
_____
_____
_____
_____

7. Աշխատանքային խմբի անդամի/անդամների՝ կայացված որոշման հետ անհաձայնության դեպքում՝ (աշխատանքային խմբի անդամի/անդամների անհամաձայնության վերաբերյալ նշումներ)

Աշխատանքային խմբի հիմնական կազմ

N	Անուն	Ազգանուն	Ստորագրություն
1.			
2.			
3.			
4.			
5.			
6.			
7.			
8.			

Գույքագրման աշխատանքներին մասնակից այլ անձիք

N	Անուն	Ազգանուն	Կազմակերպության անվանում	Ստորագրություն
1.				
2.				
3.				
4.				
5.				

6.				
7.				
8.				